ՎԻԿՏՈՐՅԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՎԱԽԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /Տավուշի մարզի օրինակով/

Հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նախադպրոցական տարիքի երեխաների բացասական հուզական - անձնային դրսևորումների աճով, որոնց մասին մատնանշում են բազմաթիվ հեղինակներ/ Գ.Մ. Բրեսլավ, Ա.Վ. Զապորոժեց, Ա.Ի. Զախարովը և այլն/: Նախադպրոցականների հուզական ոլորտի զարգացման վրա սոցիալական / հասարակական/ ազդեցության կարևորությունը մատնանշվում է Ի.Ս. Կոնի, Վ.Կ. Վիլյունասի աշխատություններում: Մասնավորապես Լ.Յ. Գոզմանը ընդգծում է, որ մարդու փոխազդեցությունը բարենպաստ միջավայրի հետ նպաստում է դրական հույզերի զարգացմանը: Քանի որ մարդը, որը գտնվում է բարենպաստ պայմաններում, հակված է ավելի դրական վերաբերվել այլ մարդկանց: Հույզերը, հանդիսանալով բարձրագույն հոգեկան ֆունկցիա, առաջանում և ձևավորվում են շրջապատող սոցիալական միջավայրի ազդեցության տակ:

Երեխայի զարգացման անբարենպաստ միջավայրային պայմաններին պետք է դասել այն միջավայրը, որն իրենից ներկայացնում է սթրես գործոնների ամբողջություն: Անբարենպաստ միջավայրի պայմաններում անձին հնարավորություն չի ընձեռնվում բավարարել հիմնական հոգեբանական պահանջմունքները երկարատև ժամանակահատվածի ընթացքում:

ՀՀ ծայրամասային շրջանները առանձնանում են իրենց տնտեսական, մշակութային և սոցիալական դրության յուրահատկությամբ: Որպես ծայրամասային և սահմանամերձ շրջան իր առանձնահատուկ տեղն է գրավում Տավուշի մարզը, որը վերջին տարիներին ապրում է տնտեսական լճացում / գործազրկություն, նախադպրոցական հաստատությունների բացակայություն, բնակչության մեջ հոգեբանական սթրեսի գերակայություն/: Հայաստանի Հանրապետությունում հետպատերազմյան շրջանում առաջացան տնտեսական, սոցիալական, քաղաքական և բարոյա -հոգեբանական հիմնախնդիրներ: Հատկապես այս հիմնախնդիրների ծանր հետևանքներն իր վրա կրեց սահմանամերձ գոտու ազգաբնակչությունը: Ներկայումս սահմանամերձ գոտին հանդիսանում է դեպրիվացված միջավայր, քանի որ դեռևս չի անցել պատերազմի վերսկսման վտանգը, պարբերաբար տեղի են ունենում կրակահերթեր, որոնք ծայրաստի-

ճան լարվածության, տագնապի, սարսափի և վախի մեջ են պահում տեղի ազգաբնակչությանը[1]:

Հարց է ծագում, իսկ ինչպե՞ս է ընթանում նման պայմաններում նախադպրոցական տարիքում գտնվող երեխաների հուզական ոլորտի զարգացումը: Նախադպրոցական տարիքը հանդիսանում է անձի ձևավորման և երեխաների հուզական որորտի ինտենսիվ զարգացման շրջան, ուստի անբարենպաստ պայմանների ազդեցությունը կարող է բացասաբար անդրադառնալ երեխաների վրա՝ ձևավորելով նյարդային, անհավասարակշիռ, բազմաթիվ վախերով և տագնապալիության բարձր մակարդակ ունեցող անձնավորություն: Հատկապես հատկանշական է մանկական վախերի դրսևորումը:

Ըստ Բոուլբիի նախադպրոցական տարիքում երեխայի համար՝ կապվածության և վստահության տեսակետից նշանակալից են դառնում հայրը կամ մայրը: Եթե այդ կարևոր շրջանում ծնողները գտնվում են երեխայի հետ և ուշադիր են նրա պահանջմունքներին, ապա երեխայի մոտ ձևավորվում է նրանց նկատմամբ ուժեղ կապվածություն: Սա մեծ բազա է ստեղծում անվտանգության զգացման և կյանքի նկատմամբ վստահության ձևավորման համար: Բոուլբին գտնում է, որ երեխաները անվտանգության զգացման ձևավորման հետ քիչ են ընկալունակ դառնում վախի նկատմամբ, քանի դեռ նրանց մոտ պահպանվում է կապվածության օբյեկտի նկատմամբ վստահություն [5]:

Ժամանակակից քաղաքակրթությունում գոյություն ունեն ավելի շատ օբյեկտներ, իրադրություններ, պայմաններ, որոնք վախեցնում են կամ պոտենցիալ կարող են վախեցնող լինել: Հենց դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ վախը ավելի հաճախ է հանդիսանում գիտական հետազոտության օբյեկտ, քան մեկ ուրիշ էմոցիա:

Մեր օրերում սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով սահմանամերձ գոտում ապրող ընտանիքներում տիրում է հոգեբանական անառողջ մթնոլորտ: Նյութական ծանր պայմանների հետևանքով երեխաները հաճախ անուշադրության են մատնվում ծնողների կողմից, չեն բավարարվում երեխաների հուզական պահանջները: Տվյալ դեպքում երեխայի մոտ չի ձևավորվում պաշտպանվածության և ապահովվածության զգացում, որը նպաստում է երեխաների մոտ տարբեր տեսակի վախերի առաջացմանը:

Մեր հիմնախնդրի կարևորությունն այն է նրանում, որ նախադպրոցական տարիքը հանդիսանալով երեխայի հուզական ոլորտի ինտենսիվ զարգացման շրջան՝ այս տարիքում վախերը կրում են դինամիկ բնույթ և բացասական ազդեցություն են ունենում երեխայի զարգացման վրա՝ ձևավորելով նյարդային, անհավասարակշիռ, տագնապալիության բարձր մակարդակ ունեցող անձնավորություն: Ուստի պրոբլեմի լուծումը ընկած է անձի ձևավորման տարիքային հնարավորությունների և պահանջների իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծման հիմքում:

Շերբատիխը գտնում է, որ տարիքի աճմանը զուգընթաց փոխվում է վախերի դրսևորման ձևերը և առանձնահատկությունները: Երեք տարեկանում երեխաները սովորաբար վախենում են կենդանիներից: 3 տ.-ից հետո շատ երեխաներ վախենում են մթությունից և մենակությունից: 4-5 տ.-ից սկսած երեխաները վախենում են հեքիաթային հերոսներից, հատկապես օձերից, վամպիրներից, կախարդներից, Բաբա-Յագայից: 6-7 տ.-ում կարող են վախենալ հրդեհից, կրակից, պատերազմից, երեխաները վախենում են մահանալուց, կամ վախենում են մտերիմների մահից [8]:

Նախադպրոցական տարիքում առաջացող վախերը բաժանվում են 2 խմբի՝

1.կոնկրետ վախեր, որոնք առաջանում են այն իրադրություններում, երբ վտանգը կապված է շրջապատող իրականության կոնկրետ առարկաների, էակների կամ երևույթների հետ:

2.սիմվոլիկ վախեր, որոնք առաջանում են այն իրադրություններում, երբ վտանգն իրենից ներկայացնում է անորոշության կամ ֆանտազիայի արդյունքում ստեղծված իրադրություն:

Ա. Զախարովը գտնում է, որ նախադպրոցական տարիքի համար բնութագրական է վախերի եռյակը. մենակություն, մթություն և փակ տարածություն: Այս երեք վախերը կապված են իրար հետ և հնարավոր է, որ արտացոլում են ինչ-որ խորքային բնազդային վախեր, որոնք մենք ձեռք ենք բերել մեր հեռավոր նախնիներից [4]:

Ավագ նախադպրոցական տարիքում կենտրոնական տեղ է գրավում մահվան վախը: Մահվան վախը բոլոր վախերի արմատն է: Այդ տարիքում երեխան հասկանում է իր անօգնականությունը և շրջապատող աշխարհի բարդությունը, այս տարիքից երեխան սկսում է մտածել մահվան մասին: Մահվան վախը կապված է հարձակման, հիվանդություններից վախերի հետ, ծնողների մահվան, մղձավանջային երազներից, մթությունից, հեքիաթային հերոսներից, կենդանիներից, հրդեհից, կրակից և պատերազմից վախերի հետ: Բոլոր այս վախերը իրենց մոտիվացիայում ունեն կյանքի համար վտանգ, եթե ոչ ուղղակիորեն, ապա կապված ծնողների մահվան հետ, մթության մեջ և երազներում հրեշների հայտնվելու հետ: Ինչ-որ մեկի կողմից հարձակումը (այդ թվում նաև կենդանիների), ինչպես նաև հիվանդությունը կարող է դառնալ դժբախտություն, առաջ բերել մահ: Դա վերաբերվում է նաև փոթորիկին, ջրհեղեղին, երկրաշարժին, կրակին, հրդեհին և պատերազմին, որոնք իրենց մեջ կրում են կյանքի համար վտանգ [3]:

Նախադպրոցական տարիքում առաջ են գալիս հետևյալ հարցերը. «Իսկ ես կմեռնե՞մ», «Իսկ դու, մայրիկ, կմահանա՞ս», «Քանի՞ տարի է ապրել քո հայրիկը, մայրիկը», «Ինչո՞ւ են մարդիկ ապրում» և այլն: Այս հարցերը խոսում

են աբստրակտ մտածողության զարգացման, ընդհանրացման ընդունակության, ժամանակի և տարածության կատեգորիաների հասկացման մասին [8]:

Մահվան վախի առաջացումը նշանակում է տեղի ունեցող տարիքային փոփոխությունների գիտակցումը: Երեխան սկսում է հասկանալ, որ մեծանալը ինչ-որ էտապում իր հետևից կարող է բերել մահ, որի անխուսափելիությունն առաջացնում է անհանգստություն: Մահվան վախ հանդիպում ենք այն երեխաների մոտ, որոնց մոտ 8 ամսականում հայտնաբերվել են անծանոթ մարդկանցից վախեր [7]:

Երեխան կարող է վախենալ Բաբա-Յագայից, գայլից, Մեշոկ Պապից, ունենա տարբեր տեսակի վախեր, բայց դրանց հետևում կանգնած է մահվան վախը: Այդ պատճառով վախերի դեմ պայքարը առաջին հերթին պայքար է մահվան վախի դեմ [3]: Քանի որ երեխայի բոլոր վախերի հետևում կանգնած է անգիտակցաբար կամ գիտակցաբար մահվան վախը, ապա վախերի պրոֆիլակտիկան դա օպտիմիզմի դաստիարակությունն է, ինքնավստահության, ինքնուրույնության դաստիարակությունն է, երեխան պետք է իմանա վտանգների և վնասների մասին, բայց դրանց պետք է վերաբերվի լավատեսորեն: Երեխային պետք է հետ պահել իր ուժերից վեր ապրումներից, մտերիմ մարդկանց հիվանդությունների անբարենպաստ վերջաբանից, ծանր վթարներից, մահվան և թաղումներին ներկա գտնվելուց: Դրանց մասին պետք չէ խոսել երեխայի մոտ [6]:

Այսպիսով, մանկական վախերը սովորաբար հանդիսանում են տարիքային դրսևորումներ և տարիքի աճմանը զուգընթաց փոխվում է վախերի դրսևորման ձևերը և առանձնահատկությունները:

Իսկ ինչու՞ է երեխաների մոտ առաջանում մեծ քանակությամբ վախեր: Կարելի է վստահությամբ ասել, որ վախերն ավելի հաճախ դրսևորվում են հուզականորեն զգայուն ու տպավորվող երեխաների մոտ, ինչպես նաև տագնապային ծնողների երեխաների մոտ :

Մեր կողմից կատարվել է հետազոտություն Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում / Վարագավան և Պառավաքար/ և սահմանից հեռու գտնվող Իջևան քաղաքում :

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել միջավայրային դեպրիվացիայի պայմաններում ապրող և դաստիարակվող երեխաների վախերի դրսևորման առանձնահատկությունները՝ պայմանավորված նրանց ծնողների հուզական անկայուն վիճակով և նրանց կողմից իրականացվող դաստիարակության առանձնահատկություններով:

Մեր առջև խնդիր ենք դրել ուսումնասիրել հետպատերազմյան շրջանում սահմանամերձ գոտու ազգաբնակչության տագնապալիության մակարդակը, իրենց հուզական վիճակներով պայմանավորված՝ կիրառվող դաստիարակության առանձնահատկությունները և այս ամենի հետևանքով երեխաների վախերի դրսևորման յուրահատկությունները:

Հետազոտությունը սկսելուց առաջ մենք ունեցել ենք հետևյալ վարկածը. ենթադրվում է ,որ նախադպրոցականների մոտ, որոնք դաստիարակվում են միջավայրային դեպրիվացիայի պայմաններում, բնութագրական է բացասական հույզերի աճ, մասնավորապես վախերի, համեմատած այն նախադպրոցականների հետ, որոնք ապրում են բարենպաստ սոցիալ-տնտեսական և մշակութային միջավայրի պայմաններում:

Հետազոտության համակազմում ընդգրկվել են 30 ընտանիքներ սահմանամերձ գոտում /հիմնական խումբ/ և 30 ընտանիքներ Իջևան քաղաքում /ստուգիչ խումբ/: Հետազոտության ժամանակ օգտագործել ենք հետևյալ մեթոդները .

1.Թեյլորի տագնապախռովության չափման մեթոդիկան , որն անց է կացվել երեխաների ծնողների հետ

2.Ա. Զախարովի «Վախերի առկայության դիագնոստիկա» մեթոդը

3.Ե. Շեֆֆերի և Պ. Բելլի PARI / ծնողական վերաբերմունքի/ մեթոդիկան

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ հիմնական խմբի հետազոտվողների /ծնողների/ 75%-ի մոտ ստացվել է տագնապալիության բարձր մակարդակ, իսկ ստուգիչ խմբի հետազոտվողների /ծնողների/ միայն 40%-ի մոտ է գրանցվել տագնապալիության բարձր մակարդակ :

PARI մեթոդի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ հիմնական խմբում տագնապալիության բարձր մակարդակ ունեցող ծնողները իրենց երեխաների վրա դրսևորում են ավելորդ կենտրոնացվածություն / ծայրահեղ խնամք, ապահովության և անվտանգության ստեղծում/: Ստուգիչ խմբի ծնողների մոտ գրանցվել է օպտիմալ հուզական կոնտակտ երեխաների հետ :

«Վախերի առկայության դիագնոստիկա» մեթոդի վերլուծությունից հիմնական և ստուգիչ խմբում գրանցվել է հետևյալ արդյունքները.

Մանկական վախեր	Հիմնական խումբ	Ստուգիչ խումբ
Բժշկական վախեր	83%	50%
Ֆիզիկական վնասհետ կապված վախեր	80%	33%
Սոցիալականորեն միջնորդավորված վախեր	67%	63%
Վախեր կենդանիներից և հեքիաթային հերոսներից	80%	53%
Վախեր մղձավանջային երազներից և մթությունից	67%	43%
Տարածական վախեր	53%	33%
Մահվան վախ	70%	67%

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ հիմնական խմբի երեխաների մոտ վախերի քանակը գերազանցում է տարիքային նորման, իսկ ստուգիչ խմբի երեխաների մոտ վախերը հանդիսանում են տարիքային նորմա:

Հիմնական և ստուգիչ խմբերում երեխաների վախերի համեմատությունը ցույց է տալիս, որ սահմանմերձ գոտում ապրող երեխաների մոտ խիստ սրված է բժշկական վախերը / ցավից, արյունից, հիվանդությունից, սրսկումներից/, ֆիզիկական վնասի հետ կապված վախերը / պատերազմից, հրդեհից, բնական աղետներից / և մահվան վախը:

Այսպիսով, մասնագիտական գրականության և հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կարելի է հանգել այն եզրակացության, որ սահմանամերձ գոտին հանդիսանում է դեպրիվացված միջավայր, որի հետևանքով տեղի ազգաբնակչության հոգեկան ոլորտում ձևավորում է հուզական անկայուն ֆոն՝ տագնապալիության բարձր մակարդակով: Դա իր բացասական ազդեցությունն է ունենում նրանց կողմից նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործընթացում, որի ընթացքում ծնողները դրսևորում են ավելորդ կենտրոնացվածություն իրենց երեխաների նկատմամբ, իրենց տագնապային վիճակը դաստիարակության ընթացքում փոխանցում են երեխաներին: Դա իր հերթին հանգեցնում է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ մեծ թվով վախերի առաջացմանը, որը սահմանամերձ գոտում ապրող երեխաների մոտ գերազանցում է տարիքային նորմա: Այդ իսկ պատճառով երեխաները ապրում են գերլարվածության պայմաններում և անհրաժեշտ է հատուկ հոգեբանական միջամտություն `երեխաների հուզական ոլորտի կայունության ապահովման համար:

SUUMERY

There are analyses of the children's fear characteristics, which were brought up in the terms of areal deprivation / ar example Tavush region/. Our research activities points that the fears among the children who lived in adwerse conditions were increased the age-specific norms.

Գրականության ցանկ

1. Սկրտումյան Ս. Պ., «Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները»; Եր., 1999; էջ 10-45; 67-87:
2. Алексеева Е.Е. " Психологические проблемы детей дошкольного возраста " Речь Санкт-Петербург 2006 - 224 с.
3. Гарбузов В.И. "Нервные дети" изд-во "Медицина", Москва, 1990-173 стр.
4. Захаров А. И. "Дневные и ночные страхи у детей" изд-во Союз, СПб, 2000-516 с
5. Иван Вард "Фобия" изд-во Проспект, Москва 2002-78 стр
6. Окленд ер В. "Окна в мир ребенка", изд-во Эксмо, Москва, 1997-342 стр.
7. Рики Эмануель "Страх", изд-во "Проспект", Москва, 2002-79 стр.
8. Щербатых Ю. В. "Психология страха. Популярная энциклопедия", изд-во Эксмо, Москва 2003-512 стр.